

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ  
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՄԲԻՈՆ	ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՍՈՂՈՒԼ	ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՄԻՉ ԵՎ ՍՈՂՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ	1609B4/01
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՍՅԱԿ	1-ին կուրս, 1-ին կիսամյակ
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ տալ ժուռնալիստիկայի զանգվածային հաղորդակցության միջոցներով /մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, կինո/ հրատապ տեղեկատվություն հավաքող, մշակող ու պարբերաբար տարածող հասարակական գործունեության տեսակի, քարոզչության ձևի մասին, որը պատկերում է իրականությունը, նրա օրինաչափություններն ու զարգացման ընթացքը, որ ունի սցիալ-կողմնորոշող նշանակություն: Ժուռնալիստիկա տերմինով սահմանել ժուռնալիստական գործունեության բազմատարր արտադրանքը, նրա ընդգրկած մասնագիտությունների հանրագումարը, առարկայի ուսումնասիրությունն ու դասավանդումը:</p>
ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	<ul style="list-style-type: none"> <li>• ԳԻՏԵԼԻՔ - տեսության ու պրակտիկայի դիալեկտիկական համագործակցություն, երբ տեսությունն ընդհանրացնում է պրակտիկան, իսկ պրակտիկան տեսության համար ծառայում է որպես հենասյուն և նրա իրական լինելու չափանիշ, տեղի է ունենում ժուռնալիստի ստեղծագործական ներուժի զարգացումը:</li> <li>• ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ հասկանալ, որ ժուռնալիստիկան ԶԼՄ-ների վերջնական աշխատանքի արդյունքն է: Իսկ որպեսզի այն հասնի լսարանին, պետք է ապահովել բազմաթիվ ենթակառուցվածքների համագործակցությունն ու փոխադարձ կապերի գործունեությունը: Առաջին հերթին դրանք լրատվական գործակալություններ, մամուլի ծառայություններ, գովազդային գործակալություններ են, որոնք ժուռնալիստիկային տարբեր նյութեր են մատակարարում: Մամուլի լույսընծայումն ու հեռուստա և ռադիոհաղորդումների հեռարձակումն ապահովվում է տեխնիկական ծառայությունների միջոցով, առանց որոնց անհնար է ժուռնալիստական արտադրանքը հասցնել լսարանին:</li> <li>• ՀՍՏՈՒԹՅՈՒՆ տիրապետի Առուձայնալիստիկան կոլեկտիվ գործունեության նրբություններին: Ընկալի, որ այն ընդգրկում է հրատարակիչ, ժուռնալիստ լսարան համակարգը և պահանջում է կադրերի գաղափարական ու մասնագիտական պատրաստ-վածություն: Ժուռնալիստիկային հատուկ են նոր գաղափարայնությունը, սկզբունքայնությունը, հասարակական երևույթները խորությամբ վերլուծելու կարողությունը, ծավալվող իրադարձությունների օպերատիվ քննարկումը, փաստերի ու գործելակերպի վերհանումը:</li> </ul>

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆԿԱՐԱԳԻՐ

- ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 9 կրեդիտ
- ԼՍԱՐԱՅԻՆ ԺԱՄ - 80 ժամ
- ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ - 40 ժամ
- ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 40 ժամ
- ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ - 5 ժամ

ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախնական գիտելիքներ հայոց լեզվի և գրականության, հայ գրողների հրապարակա-խոսական նյութերի հետ ծանոթության, մամուլի միջոցներում հրապարակված գրական ու լրագրողական ստեղծագործությունների մասին: Ինչպես նաև տեղեկություններ նախասիրած ՋԼՄ-ների վերաբերյալ:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Դասախոսություն, ինքնուրույն և խմբային աշխատանք

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

\*Ժուռնալիստիկան որպես հատուկ սոցիալական ինստիտուտ և բազմաթիվ հաստատությունների համակարգ, որի մեջ մտնում են պարբերականների խմբագրությունները, հրատարակչությունները, գովազդային և լրատվական գործակալությունները, հեռուստառադիո ընկերությունները, մամուլի կենտրոնները, ինտերնետում գործող լրատվական գործակալություններն ու էլեկտրոնային թերթերը և այլն:

\* Ժուռնալիստական ինստիտուտների գործունեությունը սպասարկող կազմակերպությունների հետ /կապի միջոցներ, հրատարակչությունները տարածող հիմնարկներ, տպարաններ, հեռուստակինո ֆաբրիկաներ և այլն/ կապերի մասին:

Ժուռնալիստիկայի գիտական և կադրերի պատրաստման խնդիրներն ապահովող, գիտա-ուսումնական այլ մասնագիտական հիմնարկների գործունեության մասին:

\* Ժուռնալիստիկայի գործունեության տեսակների համակարգն ապահովող սոցիալական ինստիտուտների գործունեությունը:

\*Տեղեկություններ տեսակների համակարգի մասին, որն իր մեջ ներառում է պարբերականներ, ամսագրեր, հեռուստառադիո ծրագրեր ստեղծելու գործունեություն, գործակալությունների, տեղեկա-տվական ծառայությունների և Ժուռնալիստական այլ ինստիտուտների ձևավորում:

\* ՋԼՄ-ի քաղաքականության մշակում և իրականացում, այլ կազմակերպական աշխատանքներ. կոլեկտիվների ձևավորում, կադրերի վերապատրաստում, այլ սոցիալական ինստիտուտ-ների հետ կապերի ու հարաբերությունների հաստատում, տեղեկատվության հավաքման ու մշակման ուղղությամբ ստեղծագործական գործունեության իրականացում:

\*Ժուռնալիստիկան մասնագիտությունների հանրագումար է, որն ապահովում է նրա գործունեությունը բոլոր ոլորտներում:

\*Ժուռնալիստիկան որպես ստեղծագործությունների համակարգ: Ժուռնալիստական ստեղծագործություն-ների նախապատրաստության համար անհրաժեշտ տարբեր մասնագիտությունների տեր, հատուկ պատրաստականության մասնագետների մասին, որոնք զբաղվում են տպագրության, հեռարձակման հետ կապ չունեցող աշխատանքներով, ինչպիսիք են ծրագրերի կազմումը, սցենարական ու ռեժիսորական պլանները, խմբագրության ներքին խնդիրները, նամակագրական կապերի հաստատումը և այլն:

\*Ժուռնալիստիկան որպես զանգվածային տեղեկատվության փոխանցման միջոցների համակարգ: Տեղեկատվության փոխանցման համար, օգտագործվող հաղորդակցության տարբեր ձևերի տպագրություն,

Blank box for text entry.

հեռուստատեսություն, ռադիո: Ինչպես նաև հրատարակությունների ու տիպերի բազմազանությունը ձևավորող տարբերակումների. համագգային, տեղական, ընդհանուր ու մասնագիտական լսարանին ուղղված, ստեղծագործական նկարագրով, սոցիալական դիրքորոշման բնույթով առանձնանալու վերաբերյալ:  
 \*Ժուռնալիստիկան որպես ուսումնական դիսցիպլինների հանրագումար և գիտության հատուկ ոլորտ: Հասրակական կյանքում ժուռնալիստիկայի դերակատարության՝ սոցիալական պատասխանատվության, մարդու բազմակողմանի դաստիարակության, այլ ինստիտուտների հետ համագործակցության, քաղաքական հայացքների, քաղաքացիական հասարակության ձևավորման, ժողովրդավարական գործընթացներին ու սոցիալական կյանքին մասնակցության հարցերի մասին:  
 Տարրական տեղեկություններ ժուռնալիստիկայի ժանրերի վերաբերյալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
 ՀԻՄՆԱԿԱՆ

1. ВОРОШИЛОВ В. Журналистика. -САНКТ-ПЕТЕРБУРГ, 1999г.
2. ПРОХОРОВ Ведение в теорию журналистики.- МОСКВА, 1998г.

ԼՐԱՑՈՒՑԻՉ

1. ЕСИН Б.История русской журналистики 19-ого века. - МОСКВА, 1989г.
2. Журналистика западноевропейских стран: Учеб.пособ.- ЛЕНИНГРАД, 1990г.
3. Журналист.- журнал, МОСКВА, 1990-2007 гг.
- 4.Справочник журналиста.- МОСКВА, 1988г.
- 5.Ա.Սորիկյան.Ժուռնալիստիկա, Երևան, 2006
- 6.Беспалова А.Г.<История мировой журналистики>, -Ростов-на Дону, 2000 г.

ՄՏՈՒԳՄԱՆ ԵՎ  
 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ստուգողական աշխատանք, բանավոր ստուգում  
 Ընթացիկ ստուգումներ.  
 Նախատեսված են 2 ընթացիկ գրավոր ստուգում՝ստուգողական աշխատանքներ, յուրաքանչյուրը՝ 100 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝30,30,20,20 միավորային արժեքով: Եզրափակիչ ստուգումը բանավոր է՝ 100 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝30,30,20,20 միավորային արժեքով: Միավորների քայլը 5 է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ  
 ԲԱՂԱԴԻԻՉՆԵՐ ԵՎ  
 ԿՇԻՌ

1. Բաղադրիչ 1 – 10% (հաճախումներ)
2. Բաղադրիչ 2 – 20% (ընթացիկ ակտիվություն)
3. Բաղադրիչ 3 – 70% (ամփոփիչ ստուգում)

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Գնահատման թվային միավորը	Տարային գնահատական	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը
96-100	A+	5+
91-95	A	5
86-90	A-	5-
81-85	B+	4+
76-80	B	4
71-75	B-	4-
66-70	C+	3+
61-65	C	3
40-60	C-	3-
Մինչև 39	D	2

**Ուսանողի ծանրաբեռնվածության աշխատաժամանակը կրեդիտ/կրեդիտ ժամ-9/270**

Հ/Հ	Թեմա	Լսարանային ժամեր					Ուսանողի ինքնուրույն աշխատա-ժամանակը	Ուսանողի բնօրինակ աշխատա-ժամանակը
		Դասախոսություն	Գործնական	Լաբորատոր	Մեմինար	Ուս. պրակտիկա		
1.	«Ժուռնալիստիկա» հասկացությունը, «Ժուռնալիստիկայի ներածություն» դասընթացի առարկան, կառուցվածքը և խնդիրները:	2					2	4
2.	Ժուռնալիստիկան իբրև ուսումնասիրության առարկա և խնդիրները:				2		2	4
3.	Ժուռնալիստիկան որպես ինտելեկտիվ գործունեության ձև:	2					3	5
4.	Զանգվածային լրատվամիջոցի գործունեությունը և Ժուռնալիստիկան իբրև տեղեկատվական գործունեության ձև:				2		5	7
5.	Ժուռնալիստիկան որպես սոցիալական երևույթ և սոցիալական համակարգի կառուցում:	2					3	5
6.	Ժուռնալիստիկան ժամանակակից սոցիալական ինստիտուտների համակարգում :				2		3	5
7.	Մինչժուռնալիստական երևույթներ. պատմական արժանատիքներ, կազմավորումն ու զարգացումը:	2					4	6
8.	Մինչժուռնալիստական երևույթներ. պատմական արժանատիքներ, կազմավորումն ու զարգացումը:				2		2	4
9.	Պարբերական մամուլի ծնունդը, առաջին տեղեկատվական բյուրոները: Պամֆլետներ:	2					3	5
10.	Առաջին եվրոպական պարբերականները:				2		5	7

11.	Ամենօրյա թերթերի նախատիպերը, անձնական ժուռնալիզմ. գանգվածային և որակյալ թերթի ի հայտ գալը:	2					5	7
12.	Նոր մամուլի ծնունդը և մրցակցությունը շուկայում. Ուիլյամ Ռենդոլֆ Հերստ:				2		4	6
13.	Էժանագին թերթերի առաջացման նախապայմանները:	2					4	6
14.	Ջոզեֆ Պուլիտցեր: Դեղին մամուլ				2		3	5
15.	Ժուռնալիստիկայի պատմական տիպերն ու տեսությունները:				2		3	5
16.	Փաստ և կարծիք:	2					4	6
17.	Օբյեկտիվությունը, անաչառությունը ժուռնալիստիկայում				2		3	5
18.	Խոչընդոտներ գանգվածային լրատվության ճանապարհին:	2					4	6
19.	Պոտենցիալ և իրական տեղեկատվություն, :				2		3	5
20.	Ժուռնալիստական նյութին ներկայացվող պահանջներ:	2					3	5
21.	Հասարակության հետ կապեր:				2		3	5
22.	Ժուռնալիստիկայի տիպաբանությունը,	2					4	6
23.	ԶԼՄ-ների արդյունավետությունը, ԶԼՄ-ների իրավունքներն ու էթիկան:	2					4	6
24.	Ժուռնալիստիկան և քաղաքական մամուլը:				2		4	6
25.	Պարբերական մամուլը ԶԼՄ-ների համակարգում:	2					4	6
26.	Ռադիո				2		3	5
27.	Հեռուստատեսության յուրահատկությունները	2					2	4
28.	Հեռուստատեսային արվեստ				2		3	5
29.	Լրատվական գործակալություններ :				2		2	4
30.	Համաշխարհային լրատվական գործակալությունների հզոր քառյակը:	2					3	5
31.	Ազգային լրատվական գործակալություններ:				2		3	5
32.	Ռուսական լրատվական	2					3	5

	գործակալություններ:							
33.	Հայկականլրատվական գործակալություններ:				2		3	5
34.	Ժուռնալիստի սոցիալական դիրքորոշումը,	2					3	5
35.	Ժուռնալիստիկայի դերը մարդու դաստիարակության գործում,				2		3	5
36.	ԶԼՄ-ների համագործակցությունը:	2					3	5
37.	ԶԼՄ-ներից դեպի մասնավոր ձեռնարկություններ:				2		3	5
38.	Ինտերնետը ԶԼՄ-ների համակարգում:	2					3	5
39.	Ժուռնալիստիկան որպես հատուկ սոցիալական ինստիտուտ:				2		3	5
40.	Ծանոթություն Ժուռնալիստիկայի ժանրերի հետ:	2					3	5
Ընթացիկ ստուգում 1								11
Ընթացիկ ստուգում 2								11
Ամփոփիչ ստուգում								14
Ընդամենը								270